ԲԱՌԱՍԿԶԲԻ «ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Լեզվի հնչյունային կողմը, այսինքն հնչող խոսքը, նրա արտահայտության պլանն է կամ նյութական կողմը՝ ի հակադրություն բովանդակության պլանի, որը լեզվի իմաստակիր միավորների ամբողջությունն է:

Հնչյունաբանությունը որպես լեզվաբանության գիտաճյուղ, ուսումնասիրում է լեզվի բոլոր արտասանական միջոցները, որոնցով կազմավորվում է խոսքը և տալիս հնչյունական համակարգի համակողմանի նկարագրությունը ինչպես հատույթային, այնպես էլ վերհատույթային և վերշարահյուսական մակարդակներում:

Ինչպես հայտնի է, խոսքի հոսքում հնչյունները հանդես են գալիս փոխկապակցված, այսինքն միաձուլվում ու զուգորդվում են միմյանց հետ՝ կազմելով հնչյունական խմբեր կամ միացություններ: Դրանցից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բաղաձայնական խմբերը (consonant clusters), որոնց ուսումնասիրությամբ, ինչպես նաև բաղաձայնների կապակցելիության (combinability) օրինաչափություններով ու կանոններով զբաղվում է հնչյունաբանության այն բաժինը, որը կոչվում է ֆոնոտակտիկա:

Մասնագիտական գրականության մեջ բաղաձայնական խմբերը կամ կուտակումները (clusters) տարբեր կերպ են անվանվում. «բաղաձայնական զուգորդումներ» կամ «բաղաձայնական կուտակումներ»[1], «консонантная группа», «консонантное сочетание»[2], «сочетание согласных звуков»[3],

---

[1] Տե՛ս Ա.Հ. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, Եր., 1988, էջ 62-63:

[2] Տե՛ս Р.К. Потапова, Система делимитативных средств звучащего текста. — в кн.: Звучащий текст, М., 1983, էջ 39: Նաև տե՛ս В.А. Никонов, Консонантные сочетания, РЯНШ, 1962, N3, էջ 24-29:

[3] Տե՛ս И.Г. Милославский, Начальные сочетания согласных звуков, РЯНШ, 1967, N2, էջ 78-80:

«последовательность согласных»[4], «консонантный комплекс»[5], «консонанс»[6] և այլն: Սույն հոդվածում մենք կօգտագործենք «բաղաձայնական խմբեր» անվանումը, քանի որ այն, մեր կարծիքով, առավել ճիշտ և դիպուկ է բնորոշում հարցի էությունը:

Ավանդաբար «բաղաձայնական խմբերը» բաժանվում են երեք խմբի՝ բառասկզբի, բառամիջի և բառավերջի, որոնցից ավելի շատ և համակողմանիորեն ուսումնասիրված են հատկապես բառավերջի «բաղաձայնական խմբերը» (final consonant clusters):

Լեզվաբանորեն առավել ճշգրիտ է թվում «բաղաձայնական խումբ» տերմինի հետևյալ սահմանումը, որի համաձայն այն «բառի մեջ որոշակի դիրք գրավող և առանձնահատուկ հնչյունական հատկանիշներով օժտված, տվյալ լեզվին բնորոշ հնչյուններ գծային (линейная) հաջորդականություն է»:[7] Այստեղ անհրաժեշտ է կատարել մի էական հավելում, որը բացահայտում է այդ երևույթի գործառական առանձնահատկությունները. «բաղաձայնական խումբը» պետք է դիտել որպես համապարփակ, անբաժանելի և միաձույլ ամբողջություն իր ընդհանուր ֆիզիկական (ակուստիկական) հնչապատկերով, այլ ոչ թե որպես նրա առանձին բաղադրիչների հնչյունաբանական գործառության հանրագումար: Այլ կերպ ասած, «բաղաձայնական խմբերի» կազմում հանդես եկող բաղաձայնները առանձին վերցրած չի կարելի ենթարկել հնչյունաբանական, առավել ևս ձևահնչյունաբանական վերլուծության:[8]

---

[4] Տե՛ս Дж. Гринберг, Некоторые обобщения, касающиеся возможных начальных и конечных последовательнстей согласных, ВЯ, 1964, N4, էջ 41-65:

[5] Տե՛ս С.Н. Варданян, Сонорные в составе финальных консонантных комплексов современного английского языка в речи и пении (в сопоставлении с русским и армянским), Ер., 1987:

[6] Տե՛ս В.И. Буглак, Аллофоническая вариативность консонансов и их составляющих в английской речи (на материале финальных 4-х членных сочетаний), автореф.канд. дисс., М., 1981:

[7] Տե՛ս О.С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969, էջ 445:

[8] Տե՛ս С.Н. Варданян, նշվ. աշխ., էջ 16:
Ձևահնչյունաբանությունը (морфонология) «լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է հնչյունաբանության և ձևաբանության միջև եղած կապը և քննում հնչյունաբանական հակադրությունների գործածության առանձնահատկություն-ները, որոնք հանգեցնում են ձևաբանական փոփոխությունների: Ձևահնչյուն-աբանության ուսումնասիրության առարկան բառերի ու ձևույթների հնչյուն-աբանական կառուցվածքն է և հնչյուային կազմը»: Տե՛ս О.С. Ахманова, նշվ. աշխ., էջ 499:

Ինչպես նշվեց, ավելի շատ ուսումնասիրված են բառավերջի «բաղաձայնական խմբերը», որոնց հեղինակները, սակայն, հիմնականում բավարարվում են այդ խմբերի թվարկմամբ, ներկայացնում են հնչաշղթայում նրանց գործածության հաճախականությունը և նկարագրում նրանցում ընթացող հնչյունական պրոցեսները: Այս իմաստով եղած ուսումնասիրություններից շահեկանորեն տարբերվում է Ս.Վարդանյանի «Հայնորդները ժամանակակից անգլերենի բառավերջի բաղաձայնական կապակցություններում՝ խոսքի և երգեցողության մեջ (ռուսերենի և հայերենի համեմատությամբ)» աշխատությունը[9]: Այստեղ հանգամանորեն քննվում են բառավերջի «բաղաձայնական խմբերի» գործառական առանձնահատկությունները, որոնց հնչույթաբանական ուսումնասիրությունը կատարվում է ձևահնչույթաբանության (морфонология) դիտանկյունից: Հեղինակը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է բառավերջի «բաղաձայնական խմբերում» ձայնորդների արտասանական առանձնահատկություններին, ելնելով այն իրողությունից, որ անգլերենում ձայնորդները, ի տարբերություն հայերենի և ռուսերենի, շատ ավելի «տարողունակ» են: Այլ կերպ ասած, շնորհիվ իրենց լարվածության, հնչեղության, երկարության, և այլն, ձայնորդները առանձնանում են հնչյունական շղթայում, հատկապես երգեցողության մեջ, ուր դանդաղ տեմպի պայմաններում ձայնորդն արտասանվում է շատ ավելի ցայտուն, պարզորոշ ու հստակ:[10] Սակայն ձայնորդի «կշիռը» կամ «տարողունակությունը» բնորոշող կարևորագույն հատկանիշը նրա վանկարարությունն է, այսինքն անգլերենում ձայնորդները (m, n, l), ի տարբերություն հայերենի և մասամբ ռուսերենի, ունեն վանկարար արժեք: Այսպիսով, տալով բառավերջի «բաղաձայնական խմբերի» մանրակրկիտ հնչույթաբանական վերլուծությունը խոսքի և երգեցողության մեջ, բազմաթիվ օրինակների հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ բառավերջի «բաղաձայնական խմբերի» ձևահնչույթաբանական գործառությունը (օրինակ, կանոնավոր բայերի «անցյալ անորոշ» և II դերբայի կազմության ժամանակ) պայմանավորված է

---

[9] Տե՛ս С.Н. Варданян, նշվ. աշխ.:
[10] նույն տեղը, էջ 4:

նրանց կազմում հանդես եկող ձայնորդների «տեսակարար կշռով», հնչեղությամբ, ընդգծված երկարությամբ և վանկարարությամբ:

Բառասկզբի «բաղաձայնական խմբերը» մասնագիտական գրականության մեջ շատ ավելի քիչ են ուսումնասիրված, իսկ եղածները կրում են հիմնականում նկարագրական բնույթ: Այսինքն, դրանց հեղինակները սահմանափակվում են առավելապես հնչույթաբանական վերլուծությամբ և արտաբերական-ֆիզիկական հատկանիշների բնութագրմամբ, մինչդեռ մեզ հետաքրքրում է գեղարվեստական խոսքում բառասկզբի «բաղաձայնական խմբերի» ունեցած արտահայտչական գործառույթը:

Ստորև բերվում է անգլերենում բառասկզբի «բաղաձայնական խմբերի» կազմության ամբողջական պատկերը և ներկայացվում բաղաձայնների կապակցելիության (զուգորդելիության) օրինաչափություններն ու բոլոր հնարավոր տարբերակները:

Բառասկզբի երկանդամ «բաղաձայնական խմբերը» անգլերենում[11] (CC)

աղյուսակ 1

	/p/	/t/	/k/	/f/	/m/	/n/	/l/	/r/	/j/	/w/
/p/							Pl	Pr	pj	
/b/							Bl	Br	bj	
/t/								Tr	tj	tw
/d/								Dr	dj	dw
/k/							Kl	Kr	kj	kw
/g/							Gl	Gr	gj	gw
/f/							Fl	Fr	fj	
/v/									vj	
/θ/								θr	θj	θw
/s/	sp	st	sk	sf	sm	sn	Sl		sj	sw

[11] Աղյուսակները կազմելիս օգտվել ենք A.C.Gimson, An Introduction to the Pronunciation of English, London, 1980, էջ 242-244, և Г.П. Торсуев, Строение слога и аллофоны в английском языке, М., 1975:

/ʃ/								jr		
/h/									hj	
/m/									mj	
/n/									nj	
/l/									lj	

Բառասկզբի եռանդամ «բաղաձայնական խմբերը» անգլերենում[11] (CCC)

աղյուսակ 2

/s/	p						L	R	j	
/s/		t						R	j	
/s/			k				L	R	j	w

Աղյուսակից երևում է, որ բառասկզբի երկանդամ «բաղաձայնական խմբում» (41) որպես առաջին բաղադրիչ հանդես են գալիս ա) ուժեղ (fortis)/խուլ և թույլ (lenis)/ձայնեղ հպապայթականները՝ /p,b,t,d,k,g/ (օր. play, pray, pew, brain, beauty, try, tune, twist, dream, dew, dwindle, clean, cry, queue, quick, glass, great, Gwen, etc.), բ) ուժեղ/խուլ շփականներ /s,θ,f,ʃ,h/ (օր. spill, steak, scar, sphere, smile, snare, slave, sue, swear, throw, thew, thwart, flood, frank, few, shrink, huge, etc.): Բացառություն է կազմում ձայնեղ /v/ հնչյունը՝ օր. view, իսկ /z/-ն հանդիպում է միայն Zeus բառում:, գ) ձայնորդներ /m,n,l/ (օր. mute, new, lewd, etc.): Այս դիրքում ամենամեծ կապակցելիությամբ աչքի է ընկնում լնդերային (ալվեոլար) /s/ շփականը, իսկ հպաշփականները (affricates) իսպառ բացակայում են:

Որպես երկրորդ բաղադրիչ հանդես են գալիս հիմնականում /m,n,l,w,r,j/ ձայնորդները, ինչպես նաև ուժեղ/խուլ /p,t,k/ հպապայթականները և /f/ շփականը:

Անգլերենում բառասկզբի եռանդամ «բաղաձայնական խմբերը» թվով քիչ են (9) և ունեն կազմության խիստ միանշանակ կաղապար (մոդել): Այստեղ առաջին բաղադրիչը բացառապես /s/ ուժեղ շփականն է, որին հաջորդում է որևէ ուժեղ/խուլ հպապայթական՝ /p,t,k/, իսկ վերջին բաղադրիչը, որպես

կանոն, /l,w,r,j/ ձայնորդներից մեկն է: Օրինակ, splash, spray, spume, strangle, stew, sclerosis, scream, square, skewer, etc.:

Այսպիսով, անգլերենում, ինչպես և այլ լեզուներում, բաղաձայններն ունեն կապակցելիության սահմանափակ հնարավորություններ, այսինքն կան նրանց զուգորդելիության որոշակի օրինաչափություններ: Այսպես, երկանդամ «բաղաձայնական խմբերում», եթե առաջին բաղադրիչը աղմկային է (բացի /s/-ից), ապա երկրորդ բաղադրիչը անպայման ձայնորդ է, իսկ եթե առաջինը ձայնորդ է, ապա երկրորդը նույնպես պետք է ձայնորդ լինի, և այլն:[12]

****

Շարունակելով բառասկզբի «բաղաձայնական խմբերի» ուսումնասիրությունը, պետք է նշել, որ այս հարցի կապակցությամբ լեզվաբանական գրականության մեջ հաճախ հանդիպում ենք «ֆոնեսթեմ» (phonestheme) տերմինին, ուստի փորձենք որոշակիորեն պարզաբանել այդ երևույթը:

«Լեզվաբանական տերմինների բառարանը» տալիս է «ֆոնեսթեմ» հասկացության հետևյալ բնորոշումը. «Կրկնվող հնչյունային կապակցություններ, որոնք ձևույթի նման օժտված են որոշակի բովանդակությամբ կամ իմաստով, սակայն, ի տարբերություն ձևույթի, բառաձևի մնացած մասը զուրկ է որևէ ձևաբանական հատկանիշներից: Օր. անգլ. sp – splash, spray, spout, sputter, splutter և այլն, որտեղ – ash, ay և այլն, լրիվ իմաստազուրկ են»:[13]

Առաջինը «ֆոնեսթեմ» տերմինը օգտագործել է անգլիացի հայտնի լեզվաբան Ջոն Ֆըրթը (John Firth), որն ուշադրություն դարձրեց անգլերենում այնպիսի առանձնահատուկ հնչյունների և հնչախմբերի առկայությանը, որոնց հետ կարող է որոշակիորեն հարաբերակցվել այս կամ այն իմաստը: Ուսումնասիրելով այդ հնչյուններն ու հնչախմբերը, հեղինակը հանգում է այն հետևության, որ նրանք ունեն ամենատարբեր գործառույթներ, այդ թվում և հնչագեղագիտական (фоноэстетическая): Ըստ այդմ, փորձ է արվում զուգահեռներ անցկացնել այդ հնչախմբերի և նրանց արտահայտած որոշակի ասոցիացիաների միջև, այսինքն որոշել նրանց հարաբերակցությունը կամ

---

[12] Տե՛ս Г.П. Торсуев, նշվ. աշխ., էջ 14:
[13] Տե՛ս О.С.Ахманова, նշվ. աշխ., էջ 496:

փոխադարձ կապը: Այսպես օրինակ, crank, cross, crick, crab և այլն, Ֆըրթը միավորում է ըստ իմաստային նմանության (ծռել, կորացնել), իսկ [sl-],[sn-],[sm-]-ով սկսվող բառերը, ըստ նրա, ունեն ժխտական (բացասական) առնշանակություն (connotation), օր. smoke, smirk, smirch, smug, sniff, snap, snub, slip, slap, slump և այլն:[14]

Ամերիկյան լեզվաբան Ֆ.Հաուսհոուլդերը (F. Householder) «ֆոնեսթեմ» հասկացությունը բնորոշում է որպես «իմաստաբանական-գործառական որոշակի ընդհանրություններ ունեցող բառերի կազմում հանդես եկող հնչույթ կամ հնչույթախումբ, թեև այդ բառերը կարող են ստուգաբանորեն միմյանցից տարբերվել»:[15]

Հաուսհոուլդերը ևս, ինչպես Ֆըրթը, «ֆոնեսթեմը» համարում է երկկողմանի միավոր, որի արտահայտության և բովանդակության պլանները՝ փոխկապակցված են: Այլ կերպ ասած, նրա մոտ նույնպես միտում է նկատվում նույնացնել «ֆոնեսթեմ» և «հիմնական (արմատական) ձևույթ» հասկացությունները: Դա առավել ցայտուն է դրսևորվում Դ.Բոլինջերի (D.Bolinger) տեսության մեջ, որն, ի տարբերություն այլ մոտեցումների, պարզապես միավորում է «ֆոնեսթեմ» և ձևույթ (affective morpheme) հասկացությունները: Հարցի հանգամանալից ուսումնասիրությունը նրան բերում է այն համոզման, որ ժամանակակից անգլերենում շատ բառային զույգեր իրենց կազմում ունեն միևնույն հիմնական (արմատական) ձևույթը, օրինակ՝ hear – ear, see – scene, cover – hover – over, crape – drape, sway – swasion, bloat – blow, strut – straight, և այլն:[16] Համեմատելով տարբեր բառաշարքեր, Դ.Բոլինջերը գտնում է, որ ելնելով սոսկ մասնակի հնչյունական նմանությունից, համահունչ բառերը կարելի է ներկայացնել շղթայի տեսքով, որի տարբեր բևեռները միանգամայն տարբեր հնչողություն ունեն.ride (a horse), stride (a horse) – straddle, Spraddle – spray, splay - splatter, spatter – patter[17] :

---

[14] Տե՛ս М.В. Давыдов, Г.Т. Окушева, Значение и смысл созвучий в современном английском языке, М., МГУ, 1994, էջ 6:
[15] Նույն տեղը, էջ 7:
[16] Նույն տեղը, էջ 8:
[17] Նույն տեղը:

Այս հարցի առնչությամբ, Զ.Հարրիսի (Z.Harris) դիրքորոշումը էապես տարբերվում է իր նախորդներից: Նա նախ նշում է «ֆոնեսթեմ» հասկացության խիստ անորոշ լեզվական կարգավիճակը (ստատուս) և ապա գտնում, որ չնայած [sl-],[gl-],[fl-]-ով սկսվող բառերի որոշակի իմաստային ընդհանրությանը, դրանք ոչ մի դեպքում չեն կարող ձևույթներ համարվել, քանզի դրանք կարելի է վերլուծել միայն մեկ շարքում:[18] Հարրիսը համոզված է, որ «ֆոնեսթեմը» յուրահատուկ հնչախումբ է և ավելացնում է, որ «եթե ուզում ենք իմաստային հարաբերակցության տարրեր գտնել, ապա դրանք պետք է փնտրել ոչ թե առանձին հնչույթաբանական միավորների մեջ, այլ դրանց խմբերում կամ միացություններում»:[19]

Այսպիսով, ակնհայտ է, որ այս հարցի շուրջ կան տարբեր մոտեցումներ ու մեկնաբանություններ: Որոշ հեղինակներ «ֆոնեսթեմը» համարում են բառակազմական միջոց, այն կապելով կամ հաճախ նույնացնելով ձևույթի հետ (Զ. Ֆըրթ, Ֆ. Հաուսհոուլդեր, Դ. Բոլինջեր), իսկ ոմանք էլ այն դիտում են որպես առանձնահատուկ հնչույթ կամ հնչույթային խումբ (Զ. Հարրիս): Այս պարագայում, իհարկե, դժվար է միանշանակ գնահատել այդ վիճահարույց երևույթը: Այդուհանդերձ, մեզ թվում է, որ չնայած որպես հնչախումբ «ֆոնեսթեմը» կարող է ունենալ որոշակի հնչագեղագիտական գործառույթ, այն պետք է դիտել իբրև յուրահատուկ տեսակի ձևույթ, և որպես այդպիսին այն պետք է դառնա ձևաբանական ուսումնասիրության առարկա:

Այս տերմինին զուգահեռ, մասնագիտական գրականության մեջ շատ հաճախ օգտագործվում է «հնչյունային սիմվոլիզմ» կամ «հնչասիմվոլիզմ» (звукосимволизм) հասկացությունը: Սա շատ ուշագրավ երևույթ է և մանրամասն ուսումնասիրման կարիք ունի: «Լեզվաբանական տերմինների բառարանը» հնչյունային սիմվոլիզմը սահմանում է որպես «խոսքի որոշ հնչյունների ենթադրվող համապատասխանությունը անմիջականորեն այս կամ այն պատկերացմանը»[20]: Այլ կերպ ասած, «հնչյունային սիմվոլիզմը» մի

---

[18] Նույն տեղը, էջ 9:
[19] Տե՛ս С.В. Воронин, Фоносемантические идеи в зарубежном языкознании, Л., 1990, էջ 14:
[20] Տե՛ս О.С. Ахманова, նշվ. աշխ., էջ 404:

երևույթ է, երբ առանձին հնչյունին կամ հնչախմբին վերագրվում է անհատի գիտակցության մեջ ամրագրված խիստ որոշակի հասկացություն կամ գաղափար: Հնչյունների և երևույթների միջև եղած կապը շատ վաղուց է գրավել հետազոտողների ուշադրությունը (Պլատոն): Հետագայում Վ.Հումբոլդը, իսկ ավելի ուշ Օ.Եսպերսենը, փորձեցին գիտականորեն հիմնավորել հնչյունների ու առանձին հասկացությունների հարաբերակցությունը և գտնել որոշ օրինաչափություններ: Սակայն այս բնագավառում էական առաջընթաց արձանագրվում է միայն Է.Սեպիրի և Ս.Նյումանի փորձառական (գործիքային) ուսումնասիրությունների արդյունքում: Դրանց հիման վրա Ս.Նյումանը եզրակացնում է, որ «փոքր – մեծ» սանդղակում անգլերենի ձայնավորները դասավորվում են հետևյալ հաջորդականությամբ. i,e,ɛ,æ,a, իսկ բաղաձայնները՝ t,d,p,b,k,g:[21]

Ելնելով գիտափորձի արդյունքներից, Ի. և Մ. Թեյլորները գտնում են, որ անգլերենում բառասկզբի [g] բաղաձայնը և [gr-] բաղաձայնական խումբը լեզվակիրների գնահատմամբ կապվում է «մեծ» հասկացության հետ (great, gargantuan, grow), մինչդեռ [t] հնչյունը հարաբերակցվում է «փոքր» իմաստին (tiny):[22] Ակնհայտ է, որ սա խիստ սուբյեկտիվ տեսակետ է և միանգամայն անընդունելի, որովհետև կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ նույն հնչասկիզբ ունեցող բառերը բոլորովին այլ իմաստ ունեն. (grey, grim, grope, garland, garret, tinkle, tinted, tremendous և այլն):

Ամերիկյան նշանավոր լեզվաբան Լ.Բլումֆիլդը, խոսելով ձևույթների կապակցության տեսակների մասին գրում է, որ «անգլերենում բառարմատի ձևաբանական կառուցվածքի ողջ բարդությունը առավել ցայտուն է դրսևորվում խորհրդանշական (սիմվոլիստական) բառերում: Այստեղ կարող ենք տարբերակել (իհարկե որոշ վերապահումներով և բացառությամբ մի քանի կասկածելի դեպքերի) անորոշ իմաստ ունեցող բառասկզբի և բառավերջի արմատական ձևույթների մի ողջ համակարգ: Ակներևաբար, դրանք օժտված են

---

[21] Տե՛ս В.В. Левицкий, Звукосимволизм в лингвистике и психолингвистике, «Филологические науки»,1975, N4, էջ 55:
[22] Նույն տեղը:

վառ արտահայտված խորհրդանշական առնշանակությամբ[23], եզրակացնում է հեղինակը և ներկայացնում կրկնվող բառասկզբի բաղաձայնական խմբերի մի շարք օրինակներ՝ իրենց իմաստային հարաբերակցությամբ.

[fl-] – «շարժվող լույս», օր. flash, flare, flame, flicker, flimmer;
[fl-] – «շարժում օդում», օր. fly, flap, flit, flutter;
[gl-] – «անշարժ լույս», օր. glow, glare, gloat, gloom, gleam, gloaming, glimmer, glint;
[sl-] – «հարթ, ողորկ, սայթաքուն», «թաց, խոնավ», օր. slime, slush, slop, slobber, slip, slide;
[kr-] – «ուժեղ աղմուկ կամ հարված», օր. crash, crack, creak, crunch;
[skr-] –.«կտրուկ հարված», «ճռճռան ձայն», օր. scratch, scrape, scream;
[sn-] – «շնչառության ձայն», օր. sniff, snuff, snore, snort, snot;
[sn-] – «արագ, կտրուկ շարժում որևէ բան պոկելու, ինչ-որ բանից այն զատելու, առանձնացնելու, բաժանելու համար», օր. snap, snip, snatch, snitch;
[sn-] – «սողալու հետ կապված ինչ-որ բան», օր. snake, snail, sneak, snoop.[24]

Ակներև է, որ Լ.Բլումֆիլդը, հատուկ ընդգծելով այս բառերի հնչասիմվոլիկ բնույթը, վերը նշված բառասկզբի «բաղաձայնական խմբերը» դիտում է իբրև զուտ բառակազմական միջոց (հիմնական կամ արմատական ձևույթ), այսինքն դրանք համարում է ձևաբանական միավոր: Այս իմաստով նրա տեսակետը մոտենում է «ֆոնեսթեմ» տերմինի ավանդական բնորոշմանը (Ֆըրթ, Հաուսհոուլդեր, Բոլինջեր), և ինչպես իր նախորդները, նա նույնպես հստակ կապ է տեսնում հնչողության և բառիմաստի միջև: Այլ կերպ ասած, մի շարք «բաղաձայնական խմբերով» սկսվող բառերին վերագրվում է (ճիշտ է, որոշ վերապահումներով) որոշակի նշանակություն կամ իմաստ:

Ինչևէ, մեր կարծիքով, նման տեսակետը շատ միակողմանի է, վիճելի ու հակասական: Գուցե անգլերենում.իսկապես կապ կա «անշարժ լույս» հասկացության և [gl-] հնչախմբի միջև, կամ «թաց, խոնավ», «հարթ, սայթաքուն» և [sl-]-ի միջև, սակայն, որքան մեզ հայտնի է, ոչ ոք դա դեռ չի ապացուցել կամ էլ փորձել-պարզել, թե օրինակ [gl-] կամ [sl-]-ով սկսվող, ու բոլորովին տարբեր իմաստով քանի բառ կա անգլերենում. (օր. gland, globe,

---

[23] Տե՛ս Л. Блумфилд, Язык, М., 1968, էջ 266:
[24] Նույն տեղը, էջ 267:

glutton, slay, slave, sleeve, etc.): Ասվածը ամենևին էլ չի նշանակում, որ մենք վիճարկում ենք կամ փորձում կասկածի տակ դնել բուն «հնչասիմվոլիզմ» հասկացության գոյությունը: Պարզապես այստեղ անպայման պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք. բառի այսպես կոչված «հնչյունական հիմնավորվածություն» հասկացությունը (фонетическая мотивированность), որը ենթադրում է բառի հնչակազմի սիմվոլիկ նշանակության և բառիմաստի միջև առկա որոշակի համապատասխանություն:[25] Հետևաբար, հնչասիմվոլիկ նշանակություն ունեն հատկապես այն բառերը, որոնցում հնչակազմի և բառիմաստի միջև կա առավելագույն համապատասխանություն, այսինքն դրանք «հնչաբանորեն հիմնավորված» են: Այսպիսով, «հնչասիմվոլիզմը» ոչ թե բացարձակ, այլ հարաբերական երևույթ է, քանի որ միայն որոշակի բառաշերտ է օժտված հնչասիմվոլիկ նշանակությամբ: Հակառակ դեպքում հնչասիմվոլիզմը կդադարեր կատարել իր հիմնական գործառույթը՝ որպես արտահայտչամիջոց օժտել բառը ընդգծված պատկերայնությամբ, դարձնել այն առավել ցայտուն ու արտահայտիչ և այսպիսով, առանձնացնել այն հնչաշղթայում: Վերը շարադրվածը վկայում է, որ «հնչասիմվոլիզմը» բավական հետաքրքիր երևույթ է և պատահական չէ, որ այն համակողմանիորեն ուսումնասիրվում է ինչպես բուն լեզվաբանության, այնպես էլ հոգեբանության և հատկապես հոգելեզվաբանության շրջանակներում: Մասնավորապես, ուշագրավ են այս բնագավառում հոգելեզվաբանների կատարած գիտափորձերը, որոնք աչքի են ընկնում իրենց արդյունավետությամբ: Դրանք արձանագրում են նոր մոտեցումներ և փորձում նորովի մեկնաբանել այդ երևույթը:[26] Այսպես, գիտափորձերի արդյունքում ապացուցվել է, որ ա) հնչասիմվոլիզմը համընդհանուր (ունիվերսալ) բնույթ ունի, այսինքն այն հանդիպում է բոլոր լեզուներում, բ) հնչասիմվոլիզմի հիմքում ընկած են հնչյունների ֆիզիկական հատկանիշները:[27]

Այդուհանդերձ, ներկայացնելով առանձին հնչյունների մանրամասն վերլուծությունը ըստ տարբեր պարամետրերի և իրենց ուսումնասիրություններում կիրառելով վիճակագրական ժամանակակից մեթոդներ, «հնչասիմվո-

---

[25] Տե՛ս В.В. Левицкий, Семантика и фонетика, Черновцы, 1973, էջ 46:

[26] Տե՛ս В.В. Левицкий, К проблеме звукосимволизма. - в кн.: Психологические и психолингвистические проблемы владения и овладения языком, М., 1969:

[27] Տե՛ս В.В. Левицкий, Звукосимволизм в лингвистике и психолингвистике, §Филологические науки:,1975, N4, էջ 58:

լիզմի» հետազոտողները, մեր կարծիքով, անտեսում են մի կարևոր հանգամանք՝ կենդանի խոսքում հնչյունների իրական գործառությունը: Նրանք հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են լեզվի հնչյունների վերլուծության վրա, հաշվի չառնելով, սակայն, դրանց խոսքային դրսևորումները, այսինքն ռեալ գործածությունը կենդանի, հնչող խոսքում:

Հետևաբար, նման ուսումնասիրությունը չի կարելի սահմանափակել միայն տվյալ երևույթի ծագման և գործառության վերաբերյալ տեսական դրույթներով՝ դրանց հավելելով առանձին հնչյունների հնչասիմվոլիկ բնույթն ապացուցող փորձառական տվյալներ: Այստեղից հետևում է, որ «հնչասիմվոլիզմի» հետագա ուսումնասիրությունը պետք է ընթանա ոչ թե առանձին հնչյունների, այլ հնչախմբերի մակարդակով:

Ներկայումս «հնչյունային սիմվոլիզմի» ուսումնասիրությամբ զբաղում է լեզվաբանության համեմատաբար նոր և հեռանկարային դիտվող այն ճյուղը, որը կոչվում է «հնչաիմաստաբանություն» (фоносемантика):[28] Ավելի ստույգ, նրա ուսումնասիրության առարկան լեզվի ողջ հնչարտահայտչական համակարգն է, որը ներառում է «հնչասիմվոլիզմը» և նմանաձայնությունը կամ բնաձայնական բառերը (звукоподражание, ономатопея):

Այսպիսով՝ 1. անգլերենում բաղաձայններն ունեն կապակցելիության օրինաչափություններ, այսինքն կա նրանց զուգորդելիության որոշակի կաղապար: Այն է՝ երկանդամ «բաղաձայնական խմբերում»՝ ա) հպապայթական (p,b,t,d,k,g)+ ձայնորդ, բ) շփական (s,θ,f, ʃ,h)+ ձայնորդ, g) s+p,t,k,f, իսկ եռանդամ «բաղաձայնական խմբերը» կազմվում են s+հպապայթական +ձայնորդ կաղապարով: 2.«Ֆոնեսթեմը» պետք է դիտել որպես բառակազմական միջոց կամ ձևաբանական միավոր: 3.«Հնչասիմվոլիզմը» հարաբերական երևույթ է, քանի որ հնչասիմվոլիկ նշանակություն ունեն միայն «հնչաբանորեն հիմնավորված» բառերը: 4.«Հնչասիմվոլիզմի» հետագա ուսումնասիրությունը պետք է ընթանա ոչ թե առանձին հնչյունների, այլ հնչախմբերի մակարդակով:

---

[28] Տե՛ս С.В.Воронин, Основы фоносемантики, Л., 1982, նաև տե՛ս А.П. Журавлев, Фонетическое значение, Л., 1974, .В. Левицкий, Семантика и фонетика, Черновцы, 1973, .В. Воронин, Фоносемантические идеи в зарубежном языкознании, Л., 1990: